# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/2.8-1-24

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2024թ. հունվարի 12-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելված N2-ի **2.8** կետով նախատեսված **«Թվային և սոցիալական հարթակների վարում»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

**Նիստին մասնակցում էին՝**

| | | |
|---|---|---|
| Ս.Հակոբյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝ Հանձնաժողովի նախագահ |
| Ա.Մկրտչյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ |
| Ս.Ասլիզադյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ |
| Ս.Հովհաննիսյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ |
| Հ.Սահակյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական |
| Լ.Աշոտյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի օգնական |
| Մ.Հակոբյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի օգնական |
| Շ.Հովսեփյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի քարտուղար |

Քվորումն ապահովված է:

***Լսեցին՝***

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

***Որոշեցին՝***

Հաստատել Հանձնաժողովի նիստի օրակարգը.

- մրցույթի արդյունքների ամփոփում:

***Լսեցին***

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրեց, որ «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» 2024 թվականի ծրագրի շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

**Նշվեց, որ**

1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի **2.8** կետով նախատեսված **«Թվային և սոցիալական հարթակների վարում»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացվել է 1 (մեկ) հայտ՝ «Պրոդիջի» ՍՊԸ–ի կողմից:

2. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում՝ **«Թվային և սոցիալական հարթակների վարում»** միջոցառման իրականացման նպատակով «Պրոդիջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում մրցույթի հրավերի պահանջներին: Մասնավորապես՝ հայտի տեխնիկական չափորոշիչներ բաժնում բացակայում է Ծրագրի նկարագրությունը, իսկ ֆինանսական առաջարկը ստորագրված չէ:

***Որոշեցին՝***

1. Հանձնաժողովը միաձայն որոշեց **մերժել 1 (մեկ)** կազմակերպության՝ **«Պրոդիջի» ՍՊԸ-ի** կողմից **«Թվային և սոցիալական հարթակների վարում»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացված հայտը:

2. **«Թվային և սոցիալական հարթակների վարում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթը լուծարել:

3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ս.Հակոբյան
(հանձնաժողովի նախագահ) - _____

Ա.Մկրտչյան - _____

Ս.Ասլիզադյան - _____

Ս.Հովհաննիսյան - _____

Հ.Սահակյան - _____

Լ.Աշոտյան - _____

Մ.Հակոբյան - _____

Շ.Հովսեփյան - _____